

**ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ  
2007Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԿԱՐԳ**

**Հաստատվել է Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովում  
4-ը սեպտեմբերի 2007թ.**

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1

2006թ. մայիսի 6-ին ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում կազմվել է ծրագրի Շահառուների խորհուրդը (ՇԽ) բաղկացած 15 անդամներից:

1.2

ՀՄՀ-Հայաստան ծրագրի 1-ին տարվա համար ընտրված ՇԽ կազմից ներքոնշյալ 4 անդամները, ովքեր 2006թ. մայիսի 2-ին ընտրվել էին երկու տարի ժամկետով (բացառությամբ Լ. Ներսիսյանի - «Ա. Գ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ, ինքնաբացարկ ներկայացնելու պատճառով), շարունակում են իրենց պարտականությունների իրականացումը մինչև 2008թ. սեպտեմբերի 29-ը: Հիմքերն են.

1. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության կարգ. 21.4.2006.

([http://www.mca.am/new/armversion/pdf/lp\\_kg\\_02\\_05\\_06\\_arm.pdf](http://www.mca.am/new/armversion/pdf/lp_kg_02_05_06_arm.pdf)).

2. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության ընտրական հանձնաժողովի արձանագրություն 2.5.2006.

([http://www.mca.am/new/armversion/minutes\\_elect\\_02.05.2006.php](http://www.mca.am/new/armversion/minutes_elect_02.05.2006.php))

3. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ 15.03.2007թ. նիստի արձանագրություն.

[http://www.mca.am/new/armversion/news\\_15.03.2007.php](http://www.mca.am/new/armversion/news_15.03.2007.php):

ՇԽ վերոնշյալ անդամներն են՝

Հ. Աբրահամյան՝ Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն,

Կ.Նազարյան՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ,

Հ. Ջավադյան՝ Կիրառական հետազոտությունների և ագրոքիզնեսի հիմնադրամ,

Ն. Վարդանյան՝ Հայաստանի անտառներ քննապահական ՀԿ:

1.3

Հաշվի առնելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պահանջները, յուրաքանչյուր ծրագրային տարում տեղի են ունենում Շահառուների Խորհրդի անդամների ընտրություններ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝

- համաձայն ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման Համաձայնագրի (Հողված 3; բաժին 1.0; կետ դ) ՇԽ անդամները պաշտոնավարում են մեկ տարի ժամկետով, պայմանով, որ նրանք կարող են վերընտրվել:
- ՇԽ 2006-2007թթ. գումարման կազմի լիազորությունների ավարտը համարվում է 2007թ. սեպտեմբերի 29-ը:
- ՇԽ անդամների թիվը չպետք է գերազանցի 15-ը:
- Անցկացվում է մեկ ընդհանուր ընտրություն բոլոր շահառու խմբերի համար:

**2. Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով**

2.1

Ընտրական գործընթացների իրականացման նպատակով ՀՄՀ-Հայաստան ծրագրի գրասենյակը հրավիրում է **Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով(ներ)**, բոլոր հնարավոր շահագրգիռ կազմակերպությունների պատշաճ իրազեկմամբ, ինչը ենթադրում է ժողով(ներ)ից առնվազն 7 օր առաջ հայտարարության գետեղում Հայաստանի 3 այնպիսի թերթերում, որոնք տարածվում են մայրաքաղաքում եւ մարզերում ու ՀՄՀ-Հայաստանի վեբ կայքում` [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

2.2

**Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը կամ ժողովները** գումարվում են այս ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող, պատշաճ իրազեկված կազմակերպությունների լիազորված ներկայացուցիչներից (համաձայն սույն կարգի 3.1 կետի), ընդ որում յուրաքանչյուր կազմակերպություն ներկայացվում է վճռական ձայն ունեցող մեկ լիազոր ներկայացուցչի միջոցով:

2.3

**Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը** քննարկում է ընտրությունների կարգը (այսուհետ` Կարգ) և դրա հավելվածները, ներառյալ մասնակցության հայտը (կցվում է, հավելված-1) և քվեաթերթիկի ձևը (կցվում է, հավելված-2) և հաստատում:

Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Կարգը վերջնական է, պայմանով, որ Կարգի դրույթների առնչությամբ առաջացած տարաձայնությունների դեպքում, գերակայությունը կտրվի «Հազարամյակի մարտահրավեր» Միջպետական Համաձայնագրի և Կառավարման Համաձայնագրի համապատասխան դրույթներին:

2.4

Ընտրությունների կարգի եւ հարակից փաստաթղթերի նախագծերը մշակում եւ **Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովին** է ներկայացնում ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների Խորհուրդը:

2.5

**Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը** հաստատում է ՇԽ-ի կողմից մշակված` ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ թափուր տեղերում անդամների ընտրության մասնակցության հայտի նմուշը (կցվում է, հավելված-1), որը պարունակում է համառոտ տեղեկություններ հայտատու կազմակերպության և կազմակերպությունից ՀՄՀ-Հայաստան ծրագրի գործառույթներին մասնակցելիք լիազորված անձի վերաբերյալ: Հայտի նմուշը մինչեւ 2007թ. սեպտեմբերի 6-ը տեղադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական վեբ կայքում. [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

2.6

Ընտրություններից առնվազն 20 օր առաջ, **շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովը** ձևավորում է **Ընտրական հանձնաժողով**:

2.7

**Ընտրական հանձնաժողովը** ձևավորվում է Շահագրգիռ կազմակերպությունների լիազոր անձանցից, բացառությամբ Շահառուների Խորհրդի անդամների թափուր տեղերի համար թեկնածու առաջադրված (որպես հավանական ընտրվող) կազմակերպությունների և ՇԽ 2 տարով պաշտոնավարող 4 անդամ-կազմակերպությունների:

2.8

**Ընտրական հանձնաժողովը** կազմված է 7 հոգուց` կազմակերպությունների լիազոր անձանցից: Ընտրական հանձնաժողովը ձեւավորվում է ինքնառաջադրմամբ:

2.9

**Ընտրական հանձնաժողովի** անդամների ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովն իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ եւ քարտուղար: Ընտրական Հանձնաժողովի նիստերն իրավագոր են անդամներից առնվազն 5-ի մասնակցության դեպքում: Ընտրական հանձնաժողովի նիստերը բաց են հանրության ցանկացած դիտարկման համար: Շահագրգիռ կազմակերպությունները պատշաճ իրազեկվում են Ընտրական հանձնաժողովի նիստերի մասին:

2.10

**Ընտրական հանձնաժողովը** իրականացնում է մասնակիցների գրանցումը ըստ ներկայացված հայտերի, կազմակերպում և իրականացնում է ՇԽ անդամների ընտրության նպատակով անցկացվող քվեարկությունը և ամփոփիչ փաստաթղթերի մշակումը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

### **3. Ընտրություններին մասնակցության իրավունք**

#### **Որպես ընտրող**

3.1

Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, միությունները, պետական մասնակցություն չունեցող հիմնադրամները և ջրօգտագործողների ընկերությունները (**բացառությամբ սպառողական կոոպերատիվների**), որոնք ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ 01.01.2007:

3.2

Կազմակերպությունը ընտրություններին մասնակցում է մեկ լիազոր ներկայացուցչի միջոցով:

3.3

Կազմակերպության լիազոր ներկայացուցիչը չպետք է լինի գործադիր, օրենսդիր և/կամ դատական իշխանությունների մարմինների պաշտոնյա:

3.4

ՇԽ ընտրությունների մասնակցելու նպատակով շահագրգիռ կազմակերպությունները պետք է ներկայացնեն մասնակցության վավերական հայտ:

3.5

Հայտը համարվում է վավերական, եթե լրացված է ամբողջությամբ, կնքված կազմակերպության կնիքով եւ ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև որպես հավելվածներ պարունակում է հետեւյալ փաստաթղթերը. կազմակերպության կանոնադրության, պետական գրանցման վկայականի պատճենները և կազմակերպության ներկայացուցչի համառոտ կենսագրությունը:

#### **Որպես հավանական ընտրվող կամ ՀՄՀ-Հայաստան ՇԽ անդամության թեկնածու**

3.6

Ընտրություններին որպես թեկնածու կարող են մասնակցել այն կազմակերպությունները, որոնք իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, կատարել են համապատասխան նշումը հայտի 3.1 կետում և բավարարում են սույն կարգի 3.7 կետի պահանջներին,

բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց ներկայացուցիչները հանդիսանում են 2006թ. մայիսի 2-ին լիազորությունների 2 տարվա իրավասությամբ ընտրված ՇԽ անդամներ:

3.7

Կազմակերպությունը կարող է առաջադրվել որպես ՇԽ անդամի թեկնածու, եթե՝

ա) ունի առնվազն 3 տարվա գործունեության փորձ, և կազմակերպության կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաքելությանն ու նպատակներին (օրինակ, ջրային ոլորտի, գյուղատնտեսության զարգացում, համայնքների զարգացում/կառավարում, բնապահպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն, արդյունավետ կառավարում, տնտեսական զարգացում, հասարակության մասնակցություն խթանում);

բ) լիազոր ներկայացուցիչն ունի ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաքելությանն ու նպատակներին առնչվող առնվազն 2 տարվա աշխատանքային և/կամ մասնագիտական փորձառություն (ինչպես նկարագրված է 3.8.ա/ կետում) և կցել է համառոտ կենսագրությունը:

3.8

Ընտրությունների մասնակցի (որպես ընտրող և ընտրվող) ներկայացրած հայտի եւ սույն կարգի պահանջների միջև անհամապատասխանության դեպքում հայտը մերժվում է ընտրական հանձնաժողովի կողմից, որի մասին հայտերի ստացման վերջնաժամկետից 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցվում է կազմակերպությանը, նշելով հայտի մերժման հիմքերը:

### **Հայտի ներկայացման գործընթաց**

3.9

Ընտրություններին մասնակցելու համար Շահագրգիռ կազմակերպությունները պետք է ներկայացնեն մասնակցության հայտը և պահանջվող փաստաթղթերը մինչև 2007թ. սեպտեմբերի 14-ի ժամը 18<sup>00</sup>-ը: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան գրասենյակ Հայաստան - 0010, Երևան, Մելիք-Աղամյան փ., 2/1 հասցեով (ՇԽ օգնականին) կամ ուղարկել [elections@mca.am](mailto:elections@mca.am) էլ. հասցեին:

3.10

ՀՄՀ ՇԽ-ի օգնականն ընդունում է ընտրության մասնակցության միայն վավերական հայտերը եւ հայտի ընդունումը հաստատում է ստացականով, որում նշվում է հայտի հանձնել-ընդունելու ժամանակը: Էլեկտրոնային կամ սովորական փոստով հայտերի ստացումը եւ վավերականությունը հավաստելու համար ՇԽ օգնականը ուղարկում է համապատասխան էլեկտրոնային նամակ կամ գրություն:

3.11

Ընտրական հանձնաժողովը ստուգում և գնահատում է բոլոր ստացված հայտերը և կազմում է մասնակիցների ցուցակը՝ համաձայն ընդունված հայտերի, հայտատու կազմակերպությունների անվանումների այբբենական կարգով եւ մինչև 2007 թ. սեպտեմբերի 21-ը հրապարակում այն՝ ցանկը տեղադրելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական վեբ կայքում. [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

3.12

Հայտի մերժման դեպքում ընտրական հանձնաժողովը դրա մասին հայտատուին տեղեկացնում է հայտը ստանալուց 5 օրվա ընթացքում:

#### **4. Ընտրական գործընթաց**

4.1

Յուրաքանչյուր մասնակից կազմակերպություն ունի մեկ քվեաթերթիկ (կցվում է, հավելված-2) ստանալու եւ մինչեւ 5 թեկնածուի օգտին քվեարկելու իրավունք: 5-ից ավելի թեկնածուի օգտին քվեարկած, քվեարկության այլ ձևերով նշմամբ, քվեարկության նշանի չնախատեսված տեղում դրված, ջնջման կամ ջնջումների առկայությամբ քվեաթերթիկները համարվում են անվավեր:

4.2

Քվեաթերթիկում նշվում է թեկնածու կազմակերպության անվանումը, ՀՄՀ-Հայաստան ծրագրում դրա լիազոր անձի անուն-ազգանունը: Քվեաթերթիկում թեկնածուների անունները շարադրվում է կազմակերպությունների անվանումների այբբենական կարգով՝ 3.12 կետում հիշատակված ձեով:

4.3

Թեկնածուները ինքնաբացարկ չեն կարող ներկայացնել ընտրություններին նախորդող 6 օրերի ընթացքում: Ինքնաբացարկի առկայության դեպքում, համապատասխան տեղեկատվություններ են ավելացվում [www.mca.am](http://www.mca.am) կայքի թեկնածուների բաժնում:

4.4

Քվեաթերթիկում տեղ են գտնում այն թեկնածուները, որոնք մինչեւ ընտրությանը նախորդող 6-րդ օրը, ինքնաբացարկ չեն հայտարարել:

4.5

Քվեաթերթիկների քանակը հավասար է հայտ ներկայացրած կազմակերպությունների քանակի 105%-ին:

4.6

Քվեաթերթիկները բազմացնում է ՀՄՀ-Հայաստան Ծրագրի ՇԽ օգնականը Ծրագրի իրականացման գրասենյակում: Քվեաթերթիկների բազմացմանը, ցանկության դեպքում կարող են ներկա գտնվել Ընտրական Հանձնաժողովի անդամները:

4.7

Քվեաթերթիկների հակառակ կողմում, քվեարկության նախորդ օրը ստորագրում են Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները:

4.8

Ցանկության դեպքում, թեկնածուները ընտրության նախորդ օրը, ժ. 14.00-16.00-ի ընթացքում կարող են քվեաթերթիկի հակառակ երեսին գետեղել իրենց ստորագրությունները:

4.9

Մինչեւ ընտրությունները քվեաթերթիկները պահվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՊՈԱԿ-ի տնօրենի մոտ:

4.10

Քվեաթերթիկները ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՊՈԱԿ-ի տնօրենը տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին, քվեարկության օրը 8:50-ին, քվեարկության վայրում:

4.11

Շահագրգիռ կազմակերպության Լիազորած անձը քվեարկության է ներկայանում անձնագրով:

4.12

Քվեաթերթիկում ընտրողները նշումները կատարում են նախընտրելի թեկնածու(ներ)ի անունների դիմաց՝ համապատասխան վանդակ(ներ)ում **V** նշանով:

4.13

Քվեարկությունը.

- Ընտրությունն իրականացվում է 1 օրում, փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությունը անցնում է ժամը 9<sup>00</sup>-18<sup>00</sup> ընթացքում:

- Քվեարկության անցկացման վայրը Հայաստանի Ամերիկյան Համալսարանն է Հայաստան, Երևան, Բաղրամյան պող. 40 հասցեով:

- Ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքները ամփոփում է ընտրության օրը ժամը 18:00-21:00-ը:

- Ընտրությունների արդյունքները ու համապատասխան արձանագրությունը հրապարակում են Ընտրական հանձնաժողովի նախագահը եւ անդամները նույն օրը ժամը 21:00-ին՝ հրավիրվող մամլո ասուլիսի ժամանակ:

- Ամփոփիչ արձանագրությունը տրամադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ օգնականին նույն օրը ժամը 21:30-ին: Արձանագրությունը տեղադրվում է [www.mca.am](http://www.mca.am) կայքում, քվեարկության հաջորդող աշխատանքային օրը, մինչև ժամը 16:00-ն:

- Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, առանց նախնական հավատարմագրման եւ առանց ընտրական գործընթացներին խանգարելու:

- Շահառուների խորհրդում ընտրված են համարվում այն 11 թեկնածուները, ովքեր մյուսներից առավել քվեներ կատանան:

- Թեկնածուների հավաքած հավասար քվեների դեպքում առաջնահերթությունները որոշվում են տեղում՝ Ընտրական հանձնաժողովի կազմակերպած վիճակահանությամբ:

## **5. Շահառուների խորհրդում ընտրված ՀԿ ներկայացուցչի կարգավիճակը**

5.1

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը ընտրված անդամները այնտեղ գործող 4 անդամների հետ կազմում են ծրագրի Շահառուների խորհրդի նոր գումարում՝ լիազորությունների 2007թ. սեպտեմբերի 29-ից 2008թ. սեպտեմբերի 29-ը ժամկետով:

5.2

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդն առաջնորդվում է 2006թ. օգոստոսի 22-ին ընդունված կանոնակարգով, ՀՄՀ-Հայաստան ծրագրի Համաձայնագրով և այլ փաստաթղթերով:

## **6. Այլ դրույթներ**

6.1

Ընտրությունների կարգի եւ հարակից փաստաթղթերի նախագծերը մշակում եւ Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովին է ներկայացնում ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը: Շահառուների խորհուրդը հաշվի է առնում իրեն պատշաճ կերպով հասցված բոլոր գրավոր առաջարկները:

6.2

Ընտրական հանձնաժողովը լուծարվում է ընտրությունների գործընթացի ավարտից մեկ շաբաթ անց:

6.3

Ընտրական գործընթացի վարչարարությունը համակարգվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի գրասենյակի եւ ՇԽ օգնականի միջոցով:

6.4

Շահառուների խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի տեղը հրաժարականի կամ այլ պատճառով թափուր մնալու դեպքում՝ լրացվում է քվեարկության արդյունքներով առավելագույն ձայներ հավաքած անմիջականորեն հաջորդող կազմակերպության ներկայացուցչով:

## **7. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամի ետկանչը**

7.1 Շահառուների խորհրդի անդամի ետկանչը կարող է տեղի ունենալ այդ անդամի ընտրությանը մասնակցած եւ քվեաթերթիկ ստացած կազմակերպությունների թվի կեսից ավելիի գրավոր ստորագրությամբ հաստատված պահանջի՝ Շահառուների խորհրդին ներկայացվելու դեպքում հետեւյալ հիմքերով.

- ակնհայտ է՝ մի կողմից այդ անդամի եւ մյուս կողմից ՀՄՀ-Հայաստան ծրագրի եւ/կամ դրա մի դրվագի միջև շահերի բախում,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը Շահառուների խորհրդում չի ներկայացնում Ծրագրի շահառուների շահերը,
- ստորագրողները ապացույցներ ունեն, թե այդ անդամը գիտակցված խախտել է ծրագրի համաձայնագիրը եւ/կամ կառավարման պայմանագիրը եւ/կամ ՇԽ կանոնակարգը, ու մնում է ՇԽ անդամ,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը հիվանդության պատճառով գործունակ չէ կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկված է ու մնում է ՇԽ անդամ:

*Սեպտեմբերի 4, 2007*